



Հարուստում են
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ նախագահ

Ս. Գևորգյան
24.01.2023թ.

ԿԱՐԾԻՔ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի
Երաժշտության մանկավարժության ամբիոնի

ԱՆԻ ՄԱՐԳՍԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ

«Հայ ավանդական օրորներ» թեմայով

ԺԷ. 00.02-«Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցով
ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են ՀՊՄՀ երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Աննա Հարությունյանը, դոցենտ Մարգարիտա Բաղդասարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Մելիքսեթյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Վլադիսլավ Եղիզարյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Աննա Աղամյանը, դասախոս Նարիա Մադոյանը:

Անի Մարգսի Հակոբյանի «Հայ ավանդական օրորներ» խորագրով ատենախոսությունը նվիրված է հայկական ժողովրդական երաժշտության ուշագրավ և ինքնատիպ ժանրերից մեկին՝ օրորներին: Ինչպես նշում է ատենախոսության հեղինակը. «Մինչ օրս ժանրի վերաբերյալ որևէ գիտական խոր հետազոտություն մեզանում չի կատարվել, բացառությամբ չափազանց հետաքրքրական, սակայն եզրահանգումներ չպարունակող հոդվածների, դիտարկումների» (էջ 4-5): Ատենախոսությունն իր երաժշտական նյութի մեծաքանակությամբ, օրորների մանրակրկիտ, մասնագիտական բարձր մակարդակով և խորությամբ կատարված վերլուծություններով, որոնց մի մասն առաջին անգամ, հեղինակին հնարավորություն են տվել մեկ աշխատության մեջ բացահայտել ժանրին բնորոշ թեմատիկ, ձևակառուցողական, ձայնակարգային,

չափակշռությամբ առանձնահատկությունները, կատարել ընդհանրանցումներ և եզրահանգումներ՝ լիովին հիմնավորելով ատենախոսության արդիականությունը:

Հետազոտության նպատակը՝ հայկական ավանդական օրորների ուսումնասիրությունն է:

Ատենախոսության մեջ առաջին անգամ կատարվել է օրորների և դրանց ենթատեսակների, համազգային և տեղային յուրահատկությունների բազմակողմանի ուսումնասիրություն, ինչում արտահայտվել է **հետազոտության գիտական նորույթը**:

Հետազոտության 1-ին գլխում ներկայացված են օրորի ժանրի բնութագիրը, թեմատիկան, բնույթը, կառուցվածքը, ժամանակակից ընտանիքում օրորի դերը:

2-րդ գլխում՝ ներկայացված է օրորների 124 նմուշների վերլուծությունը ըստ XIX դարավերջի և XX դարակազմի բանահավաքների գրառումների:

3-րդ գլխում՝ ներկայացված են ազգագրական չորս տարածաշրջանի օրորներ. Վայոց Ձոր, Ջավախք, Վան-Վասպուրական և Տարոն: Տարածաշրջանների ընտրությունը պայմանավորված է առաջին երկուսի դեպքում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի ձայնադարան-արխիվում պահպանված նյութի քանակով (35 և 23), իսկ մյուս երկուսի դեպքում, ինչպես հեղինակն ի նշում, «վառ ավանդականությամբ աչքի ընկնող ցաքուցրիվ նմուշների համակարգումն ու վերլուծությունը» ազգագրական գոտիների երաժշտամտածողության առանձնահատկությունները բացահայտելու նպատակով (էջ 6):

Օրորները հանդիսանալով ժողովրդի մշակութային ինքնության խորհրդանիշ՝ արտացոլում են այն ավանդական միջավայրը, որում ծնվում, զարգանում և գոյատևում են դարեդար, փոխանցվելով սերնդեսերունդ:

Ուսումնասիրված աշխատությունների և սեփական դիտարկումների հիման վրա հեղինակը շեշտում է օրորների դրական ազդեցությունը երեխայի հոգեբանական և ֆիզիոլոգիական (բնախոսական) զարգացման վրա, երաժշտական թերապիայի դերն ընդհանրապես:

1.2. ենթագլխում՝ «Օրորը ֆոլկլորագիտական ուսումնասիրություններում. ենթաժանրերն ու թեմատիկան» հենվելով և արժևորելով հայկական երաժշտական ֆոլկլորագիտության հիմնադիր Կոմիտաս վարդապետի, Ռ. Աթայանի և այլոց ժողովրդական երաժշտության ժանրերի դասակարգումը՝ ատենախոսության հեղինակն ըստ արժանվույն է գնահատում Մ. Բրուտյանի տեսակետը՝ երգի կերպարային, լեզվական ու ոճական առանձնահատկությունների, զարգացման օրինաչափությունների, թեմատիկայի և գործառույթի հիման վրա՝ «ընդունելով ժանրի ինքնուրույնությունը, ավելացնել դրանում գոյություն ունեցող ենթատեսակավորում /ենթաժանրավորում/» (էջ 17):

Ներկայացնելով ժանրի ուսումնասիրման պատմական ընթացքը՝ հեղինակը տարբեր տեսակետներն (բացի վերը նշվածներից նաև Մ. Ադայանի, Հ. Ափինյանի,

Ռ. Գրիգորյանի, Հ. Պիկիչյանի) ընդհանրացնելով՝ առանձնացնում է բանաստեղծական տեքստի երեք առանցքային կառույց. կայուն երգեր, հանպատրաստից հորինվածքներ և դրանց համադրություններ՝ հիմնավորելով իր մոտեցումը դրանց մեջ գոյություն ունեցող ընդհանրություններով (գործառույթ, բնույթ, նախընտրելի ձայնակարգեր, բանաձևային տեքստ, թափառող սյուժեներ, երեխային ուղղված գովք՝ «համեմված» այլաբանությամբ կամ չափազանցությամբ, կրկնակներ կամ կրկնակ բառեր, երկու ժանրերի սահմանին գտնվող երգեր) և տարբերություններով (կառուցվածք, մասշտաբ, ձայնածավալ, մեղեդու և տեքստի կապ, կայունացած ենթատեսակում՝ երբեմն կայուն ռիթմ, բուն օրորից «շեղվող» թեմատիկա, ավելի հաճախ կայունացած ենթատեսակում՝ հիմնական, բայց ոչ միակ կատարողները կանայք են):

1.3. «Օրորների կենցաղավարումը ժամանակակից ընտանիքում» ենթագլխում հեղինակը վերլուծելով ժամանակաշրջանի առանձնահատկությունները նշում է. «XX դարի վերջին սերունդների երկխոսության բացակայությունը հանգեցրեց մի այնպիսի իրողության, որում մի ողջ սերունդ կամ դրա ահռելի շերտ ոչ թե չէր սիրում, գնահատում կամ ընդունում իր ազգայինը, ավանդականը, այլ՝ չէր ճանաչում այն» (էջ 34): Պայմանավորված այս հանգամանքով, ինչպես նաև XX դարի 60-ական թթ.-ից սկսած և հատկապես վերջին տարիներին ազգային մշակույթի, հատկապես ժողովրդական արվեստի նկատմամբ անընդմեջ աճող հետաքրքրությամբ, ատենախոսության հեղինակը անհրաժեշտ է համարում անդրադառնալ օրորների արդիականության հարցին, բացահայտել ժանրի կենսունակությունը մեր օրերում: Այդ նպատակով, հեղինակը տեղեկատվություն ստանալու համար օգտվել է նաև համացանցի լայն հնարավորություններից, ինչի արդյունքում համազվել է, որ. «ժանրը, ինչ-ինչ խոցելի կեղմերով հանդերձ, միևնույն է կենսունակ է» (էջ 40):

Ատենախոսության երկրորդ գլուխում հեղինակը ներկայացնում է բուն վերլուծվող նյութը՝ ըստ XIX դարավերջի և XX դարասկզբի բանահավաքների գրառումների: Այն բաղկացած է հինգ ենթագլխից. 2.1. «Օրորը Կոմիտասի ազգագրական ժողովածուներում», 2.2. «Օրորը Սպիրիդոն Մելիքյանի գրառումներում», 2.3. «Օրորը Հակոբ Հարությունյանի ժողովածուում», 2.4. «Օրորը Միհրան Թումանյանի քառահատորյակում», 2.5. «Տպագրված և անտիպ օրորները Քրիստափոր Քուշնարյանի գրառումներում»:

2-րդ գլխում հեղինակը վերլուծում է 43 օրորներ, որոնցից 26-ը՝ կայուն ավանդական, իսկ 18-ը՝ հանպատրաստից հորինված օրորներ են, վերաբերում են Վանի, Բուրանիայի, Կեսարիայի, Ակնի, Տիգրանակերտի, Խլաթի տարածաշրջաններին: Օրորներում գերակայում է եղևկան ձայնակարգը՝ 43-ից 35-ը, հանդիպում են դորիական (3), լոկրիական (4), փոյուզիական (1), միքսոլիդիական (1) ձայնակարգերը:

Ամփոփելով 2-րդ գլուխը ստենախոսության հեղինակը գրում է. «Հաշվի առնելով ժանրի շատ անձնական բնույթը, ինչի հետևանքով խիստ դժվարանում է նյութի հավաքագրումը իր տեղին, իր ժամանակին, նշված ժամանակաընթացքում գրառված երգերի քանակը չնայած այնքան էլ մեծ չէ, սակայն բավարար, ու այնուամենայնիվ թույլ է տալիս ուսումնասիրական եզրահանգումներ կատարել, որոնք հիմնված են բանահավաքչության այս կարևոր փուլի ընթացքում ֆիքսված նյութի վրա» (էջ 69):

Աշխատության 3-րդ գլխում ներկայացված են ազգագրական չորս գոտիների՝ Վայոց Ձորի, Ջավախքի, Վան-Վասպուրականի և Տարոնի օրորներ, որոնց ընտրությունը կապված է 1-ին 2-ի դեպքում ձայնագրված նյութի քանակով, իսկ մյուս 2-ի դեպքում՝ «պատմական Հայաստանի ամենաերգեցիկ» տարածաշրջանները լինելու հանգամանքով: Հարցի բացահայտման կարևորագույն բաղադրիչն՝ անդրադարձն է երաժշտական բարբառներին: «Չորս ազգագրական գոտիների օրորներում բարբառային դրսևորումների դուրսբերումը թույլ կտա ստանալ որոշակի պատկեր՝ դուրս բերել ժանրի համար ընդհանրական, տիպականը և մյուս կողմից՝ «տեսնել» տվյալ ազգագրական գոտու «կնիքը» ժանրի վրա», - գրում է ստենախոսության հեղինակը (էջ 71):

Ատենախոսության մեջ հեղինակը երաժշտական բարբառը ներկայացնում է լայն և նեղ իմաստերով՝ ի նկատի ունենալով. «Արևմտյան և Արևելյան Հայաստանի, կամ լեռնային ու դաշտային ազգագրական գոտիների ժողովուրդների ստեղծագործություն» (էջ 71) և նեղ իմաստով՝ ի նկատի է առնվում ազգագրական գոտիների (Ապարանի, Շիրակի, Վանի, Մոկաց աշխարհի կամ Ակնի) երգեր:

Երաժշտական բարբառագիտության հարցին հպանցիկ անդրադարձել է Կոմիտաս վարդապետը՝ ապագայում առավել խորը և բազմակողմանի ուսումնասիրության ակնկալիքով, ինչը, ցավոք, չիրականացավ: Մեր օրերում երաժշտական բարբառների հետազոտությանն անդրադարձել են Ա. Փահլևանյանը՝ Մուշ-Սասունի բարբառային հետազոտությունը և դրա համեմատությունը Մոկու-Շատախ-Վասպուրականի, Զ. Թագակչյանը՝ Ջավախքի երաժշտամտածողությանը:

Ուղենիշ ընտրելով վերը նշված հեղինակների ուսումնասիրությունները, որոնցում մանրանասն վերլուծված են երգերի ձայնակարգերը, տեմպերացիան, ձայնաձավալը, կառուցվածքը, չափակշռույթը, ինչպես նաև ազգային-տիպական և գուտ տեղային երգատեսակները՝ հեղինակը փորձում է «առանձնացնել և ընդգծել ազգագրական գոտու բարբառն ու յուրօրինակ երգամտածողությունը» (էջ 72):

Այսպես, Վան-Վասպուրական/Շատախ ազգագրական գոտու հայրուրները կայունացած ենթաժանրի նմուշներ են, մոտ են վիպերգերին, լալիքներին, պանդխտության երգերին: Տարոնի ազգագրական գոտու ներկայացված 10

նմուշներից 9-ը կայունացած ենթատեսակի են: Վայոց Ձորին վերաբերող օրոքները մեծմասամբ հանպատրաստից ենթատեսակի են: Հանպատրաստից են ստեղծված նաև Ջավախքի 23 նմուշներից 17-ը:

Ատենախոսության հեղինակը տարիների ընթացքում կատարել է հսկայական հետազոտական աշխատանք՝ ձգտելով հնարավորինս շատ երգեր ուսումնասիրել, որպեսզի իր եզրակացությունները լինեն առավել խորն ու հիմնավոր: Ուսումնասիրությունները ներկայացված են ոչ միայն հիմնական տեքստում, այլև տողատակերում, որոնցում լոկ տեղեկատվական աղբյուրներ չեն նշված, այլև տեղ են գտել հնարավորինս ամբողջական տեղեկություններ՝ բանահավաքների և բանասացների, պատմա-աշխարհագրական տարածաշրջանների մասին (էջ 54, 57, 59, 64, 76, 83), ինչպես ժողովրդական երգի տեքստը հիմք է հանդիսացել գրական ստեղծագործության համար (էջ 58, 66):

3.3. ենթազվխում տեղ են գտել 2 երաժշտական օրինակներ, որոնք ևս կարելի էր ներկայացնել հավելվածում:

Բազմալեզու և բազմաբովանդակ գրականության ցանկում ներկայացված 110 հրատարակված աշխատությունները, 41 էլեկտրոնային հղումները վկայում են ստենախոսության հեղինակի բազմակողմանի հետաքրքրությունների մասին, որոնք ներառում են ոչ միայն հայկական, այլև այլ ժողովուրդների օրոքների վերաբերյալ ուսումնասիրություններ՝ ձգտումով գտնել ժանրային, թեմատիկ, ձայնակարգային, չափակշռության և այլ ընդհանրություններ:

Կան ևս որոշ վերլուծություններ, որոնք կարող են վիճահարույց լինել, ինչպես էջ 50-51-ում և այլն, սակայն հեղինակը կարողանում է հիմնավորել իր տեսակետը: Ատենախոսությունը շարադրված է լեզվի փայլուն իմացությամբ և տեղ գտած աննշան վրիպակները (էջ 23, 25, 32, 37, 50, 67, 70, 72, 84) չեն խաթարում հետազոտության գիտական և գործնական նշանակությունը:

Անի Հակոբյանի «Հայ ավանդական օրոքներ» խորագրով ստենախոսությունը կարևոր և ազգային երաժշտամտածողության ցայտուն դրսևորումներով ժանրին՝ օրոքներին նվիրված ամփոփ աշխատություն է, որով, հեղինակի վկայությամբ, միայն սկիզբ է դրվում այն գիտական, հետազոտական, գործնական աշխատանքներին, որոնք նա ծրագրում է իրականացնել ապագայում՝ դարձնելով ժողովրդի սեփականությունը, հանրայնացնելով տարբեր երգիչների և երգչուհիների համերգային կատարումներով:

Այսպիսով, Անի Հակոբյանի «Հայ ավանդական օրոքներ» խորագրով ստենախոսությունն իր գիտաճանաչողական, երաժշտավերլուծական, նյութի ընդգրկմամբ կարևոր ներդրում է ժողովրդական, ընդհանրապես ազգային երաժշտության ուսումնասիրության բնագավառում: Այն լիովին բավարարում է թեկնածուական ստենախոսությանն առաջադրվող պահանջներին, իսկ նրա հեղինակ Անի Սարգսի Հակոբյանը արժանի է ԺԷ.00.02-«Երաժշտական արվեստ»

մանագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պ/կ

Սարգիս Էլբակյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պ/կ՝ Ս. Էլբակյանի ստորագրությունը հաստատում եմ՝



ՀՊՄՀ գիտ. քարտուղար

Մ. Իսախրյան

16.01.2023թ.